Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացման և ՎիՋիԷս-84 (WGS-84) համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում միասնական հիմքի ստեղծման աշխատանքների պետական գնման պայմանագիր N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/01»

ք. Երևան «02» փետրվարի 2015թ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս Կազմակերպության գործադիր տնօրեն Վ.Կարագյոզյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացման և ՎիՋիԷս-84 (WGS-84) համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում միասնական հիմքի ստեղծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների·

1 2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2 1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5 2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5 3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը

2 1 3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2 1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին

2 2 2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5 5 կետով նախատեսված տույժը.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ.

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5 2 և 5 3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4 3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3):

3 2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին. Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4 1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 57189500 (հիսունյոթ միլիոն հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4 2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար.

5.2 Սույն պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

սույն պայմանագրի 4 1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5 3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով·

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց.

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել. Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը· Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7 1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը·

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով·

7 3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման.

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը

Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը

7 4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը.

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում.

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները /6 էջ/ հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ·

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության.

7 8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը.

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
Հասցեն ք.Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Կոմիտաս 35/2
հ/հ 900013220042	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 00113128
Աշխատակազմի ղեկավար ________ Վ. Հասրաթյան	Գործադիր տնօրեն ________ Վ. Կարագյոզյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ Տ	Կ Տ

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված 1
N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/01»
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացում և «WGS – 84» (ՎԻ ՋԻ ԷՍ-84) կոորդինատային համակարգում միասնական հիմքի ստեղծման աշխատանքների

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Հայաստանի Հանրապետության տարածքում կադաստրային քարտեզագրման աշխատանքները հիմնականում իրականացվել են 1998-2004 թվականների ընթացքում՝ հանութագրման ավանդական տարբեր եղանակներով (մենզուլային, տախեոմետրային)՝

Հանութագրման համար որպես ելակետեր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության գոյություն ունեցող պետական գեոդեզիական ցանցի 1966 և 1984 թվականներին հրատարակված կատալոգների կետերի կոորդինատները, որոնք իրար նկատմամբ ունեն որոշ շեղումներ, կապված երկրի կողմնորոշման հետ Այդ շեղումների հավասարակշռման համար անհրաժեշտ է կատարել դաշտային հետազոտություններ և նախկինում ստեղծված խտացման և հանութային ցանցերը կապակցել պետական արբանյակային ՎիՋիԷս-84 /WGS-84/ համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում ստեղծված ազգային գեոդեզիական ցանցի կետերին:

Հայաստանի Հանրապետությունում տեղագրական քարտեզները ստեղծվել են տիեզերալուսանկարահանման, օդալուսանկարահանման և վերգետնյա հանութագրման եղանակով, որոնց համար որպես ելակետային հիմք են հանդիսացել պետական գեոդեզիական ցանցի կետերի կոորդինատները, ինչպես նաև արբանյակային տեխնոլոգիաներով ստեղծված գեոդեզիական ցանցի կետերի կոորդինատները: Բացի դրանից մենզուլային և տախեոմետրական եղանակով ստեղծված քարտեզների և օդա-տիեզերալուսանկարահանման եղանակով ստեղծված քարտեզների միջև ևս կան որոշ շեղումներ Դրանք հիմնականում լինում են տեղանքի իրադրության կորագիծ տարրերի հանութագրման ժամանակ, այսինքն նկարների վրա ճիշտ պատկերված են լինում իրադրության կորագիծ և ոչ ուղղագիծ տարրերը, իսկ այդպիսի մանրամասնությամբ գործիքային եղանակով հնարավոր չէ հանութագրել

«Վարչատարածքային բաժանման մասին», «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հողային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների համաձայն 2002 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են վարչատարածքային միավորների (համայնքների) վարչական սահմանների ճշգրտման և նկարագրման աշխատանքներ Իրավական փաստաթղթերի, նախկին հողօգտագործման իրավունքի պետական ակտերի, կադաստրային և տեղագրական քարտեզների հիման վրա ճշգրտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր գյուղական և քաղաքային համայնքների վարչական սահմանները.

Նշված սահմանների սահմանագծերի նկարագրություններն արդեն իսկ հաստատվել են Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 27-ի N 1873-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի հանրապետության համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու մասին» հայեցակարգի դրույթներին համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկման աշխատանքները

Մինչև այժմ իրականացվել է ՀՀ 10 մարզերի տեղանքում (բնության մեջ) սահմանված նմուշի սահմանանիշերով վարչական սահմանների սահմանագծերի հանգուցային և բնորոշ կետերի ամրացման ու դրանց կապակցման աշխատանքները WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

համակարգում ստեղծված ազգային գեոդեզիական ցանցին, ինչպես նաև համայնքների վարչական տարածքների տեղագրական և կադաստրային քարտեզների ու հատակագծերի համադրման աշխատանքները·

Սակայն ՀՀ Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում աշխատանքներն իրականացվել են 2008 թվականին և կոորդինատավորվել են միայն համայնքների սահմանները, առանց համայնքներին հատկացված սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի. 2015 թվականին ծրագրված է իրականացնելու վերը նշված Արագածոտնի – 61, Արարատի – 27 և Արմավիրի 14 համայնքների վախչական սահմաններում ընդգրկված տարածքների սահմանների կոորդինատավորման աշխատանքները·

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Տարբեր տարիների ընթացքում հանութագրման տարբեր եղանակներով ստացված նյութերի հիման վրա հնարավոր չէր կատարել տեղագրական և կադաստրային քարտեզների համադրման աշխատանքները: Ներկայիս տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս այդ քարտեզները միմյանց հետ համադրել, որի արդյունքում ի հայտ են գալիս որոշ շեղումներ, որոնք հետևանք են վերը նշված պատճառների· Այսօր տարբեր խնդիրների լուծման համար շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում այդ երկու քարտեզներում առկա տվյալները համադրել·

Աշխատանքների իրականացման նպատակն է հանդիսանում 2009 թվականի հուլիսի 16-ի «WGS-84» (ՎԻ ՋԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում տեղագրական քարտեզների և հատակագծերի բաց հրատարակման ընթացակարգը կարգավորելու մասին>> ՀՀ կառավարության N 791-Ն որոշման համաձայն WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ներդրման նպատակով 2015 թվականին իրականացնել Արագածոտնի – 61, Արարատի – 27 և Արմավիրի 14 համայնքներին սահմաններից դուրս գտնվող հողերից հատկացված տարածքների սահմանների շրջադարձային կետերի կոորդինատավորման աշխատանքները·

Աշխատանքների իրականացման արդյունքում ստեղծված քարտեզագրագեոդեզիական նյութերի հիման վրա հետագայում հնարավոր կլինի իրավական ձևակերպում ստացած համայնքների վարչական սահմանների սահմանագծի հանգուցային կետերը ամրացնել բնության մեջ, ինչը թույլ կտա համայնքներին ունենալ պատշաճ ձևակերպված վարչական սահմաններ՝ իրենց կոորդինատներով և ուրվագծերով, որը հնարավորություն կտա ցանկացած պահին վերականգնել ոչնչացված սահմանասյան գտնվելու տեղը

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

Աշխատանքների իրականացման նպատակով հիմնականում ուշադրություն է դարձվելու տեղագրական և կադաստրային քարտեզներում ու հատակագծերում առկա ճանապարհային ցանցին, ջրագրությանը, թաղամասերի արտաքին սահմանագծին, համայնքների վարչական սահմաններին, գծային օբյեկտներին և տարածքում առկա հստակ արտահայտված այլ խոշոր օբյեկտներին (շենք, շինություն, պարիսպ և այլն)·

Այն փոփոխությունները, որոնք բնության մեջ իրենց հետ կարող են բերել տեղանքի ռելիեֆի որոշակի փոփոխության, այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել տեղագրական ու հատակագծերում ռելիեֆը հորիզոնականներով արտահայտելու առանձնահատկությունը: Դրանք քարտեզներում և հատակագծերում ճիշտ պատկերելու համար անհրաժեշտություն կառաջանա տեղանքում լրացուցիչ չափագրումներ իրականացնել:

Տեղանքում լրացուցիչ չափագրումներ իրականացնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև կադաստրային քարտեզների, հատակագծերի և համայնքների վարչական սահմանների սահմանագծի համադրման ժամանակ.

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է՝

ա) աշխատանքների իրականացման տեխնիկական նախագծերի կազմում /ըստ մարզերի/,

բ) կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրում և դրա արդյունքում առաջացած անճշտությունների ուղղում,

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

գ) կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրման արդյունքում հայտնաբերված անճշտությունների դաշտային հանութագրում /ընդհանուր տարածքի մակերեսի մինչև 2%-ի չափով/,

դ/ համայնքներին հատկացված տարածքների սահմանների սահմանագծերի հանույթային և շրադարձային կետերի կոորդինատների հաշվարկում և կատալոգների կազմում,

ե) տեխնիկական հաշվետվությունների կազմում /ըստ մարզերի/

Համադրման համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել կադաստրային և տեղագրական քարտեզների ստեղծման համար հիմք հանդիսացած ելակետային գեոդեզիական կետերի կոորդինատային համակարգը և անհրաժեշտության դեպքում պետք է կատարել վերահաշվարկ՝ մեկ միասնական կոորդինատային համակարգի բերելու համար. Գրասենյակային պայմաններում հավասարակշռման ժամանակ տվյալները հստակեցնելու նպատակով անհրաժեշտության դեպքում կկատարվեն նաև լրացուցիչ դաշտային չափագրումներ:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2015 թվականին նախատեսվում է ունենալ՝

- Տեխնիկական նախագծերը - թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի, համայնքներին հատկացված տարածքների սահմանագծերի կոորդինատավորված կետերի սխեմաները /ֆայլերը/ - էլեկտրոնային տարբերակով
- Դիտարկված հանգուցային և շրջադարձային կետերի կոորդինատների ժողովածուները /կատալոգները/ - թղթային և էլեկտրոնային տարբերակներով
- Տեխնիկական հաշվետվությունները - թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և գնման ժամանակացույցը

Ներկայացվող ծրագրի շրջանակներում 2015 թվականին նախատեսվող աշխատանքների նախահաշիվը ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված են գնման ժամանակացույցում

Աշխատանքների կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	25 12 2015թ

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Գնման ժամանակացույց

ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացման և «WGS – 84» (ՎԻ ՋԻ ԷՍ-84) կոորդինատային համակարգում միասնական հիմքի ստեղծման աշխատանքների

Հ/հ	Աշխատանքի անվանում	Չափման միավոր	Ծավալ	Միավորի արժեք /դրամ/	Գումար /հազ.դր/	1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ	
						ծավալ	գումար	ծավալ	գումար	ծավալ	գումար	ծավալ	գումար
1	Տեխնիկական նախագծի կազմում (լրացում)	նախագիծ	3	23841	71.523	3	71.5						
2	Դաշտային դիտարկումների հիման վրա շրջադարձային կետերի որոշում, ուրվագծերի կազմում, կոորդինատների որոշում	սահմա նանիշ	2787	14646.1	40818.6			1787	26172.5	1000	14646.1		
3	Սահմանանիշերի դաշտային դիտարկումների արդյունքների մշակում, հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում և կատալոգների կազմում	սահմա-նանիշ	2787	1430.7	3987 4			1787	2556 7	1000	1430.7		
4	Կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների քարտեզների համադրում / Արագածոտն-61, Արարատ -27, Արմավիր - 14 /	համայնք	102	119614	12200 6			50	5980 7	52	6219.9		
5	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետ	3	37129	111.4							3	111 4
		Ընդամենը՝			**57189.5**		**71.5**		**34709.9**		**22296.7**		**111.4**

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցեն ք.Երևան, Արշակունյաց 7
հ/հ 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի
ղեկավար՝ _____ Վ. Հակոբյան
/ստորագրություն/
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝
_____ Վ. Կարագյոզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված թիվ 2
թիվ «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/01»
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացում և «WGS – 84» (ՎԻ ՋԻ ԷՍ-84) կոորդինատային համակարգում միասնական հիմքի ստեղծման աշխատանքների

h/h	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը 2015թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների, ընդ որում՝											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը /հազ.դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	ՀՀ Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի համայնքների սահմանների ամրացում և «WGS – 84» (ՎԻ ՋԻ ԷՍ-84) միասնական կոորդինատային համակարգում միասնական հիմքի ստեղծման աշխատանքներ	71 5	71 5	34781 4	34781 4	34781 4	57078 1	57078 1	57078.1	57189 5	57189 5	57189 5	57189 5

**գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցեն ք.Երևան, Արշակունյաց 7
h/h 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի
ղեկավար՝ Ա.Հախարթյան
/ստորագրություն/
Կ Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
ՀՀ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝
Վ. Կարագյոզյան
/ստորագրություն/
Կ Տ

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված 3
N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ ԲԸՀՀԱՇՁԲ 15/01»
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> 2015թ

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝ *«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸՀՀԱՇՁԲ-15/01»*
Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներ և Կատարողը՝ ի դեմս ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն , հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	**Գնման առարկայի քանակական ցուցանիշը**	**Աշխատանքների կատարման ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)**	**Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)**
Ամբողջը՝				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Կ Տ

Աշխատանքը ընդունեցին

ստորագրություն

ստորագրություն

Կ Տ

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com